ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 5

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԴԴՄԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 22 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի՝ ավագանու հաստատմանն է ներկայացվում համայնքապետարանի աշխատակազմի և «Դդմաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿԻ-ի աշխատակից-ների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ ենթակետով, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 27-ի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն որոշմամբ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Դդմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, ինչպես նաև համայնքային ծառայողներին շնորհված ավելի բարձր դասային աստիճանի համար օրենքով սահմանված կարգով տրամադրվող հավելավճարները՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել «Դդմաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Դդմաշեն համայնքի ղեկավարին և «Դդմաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենին - 2018 թվականի մարտի 1-ից առաջնորդվել սույն որոշմամբ հաստատված հաստիքացուցակով:

4. Ուժը կորցրած ճանաչել Դդմաշեն համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 13-ի թիվ 22 որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Թադևոսյան Գառնիկ

2. Կիրակոսյան Հրահատ

3. Հովհաննիսյան Գուրգեն

4. Մելքոնյան Զավեն

Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան